

Մշակութային և Հասարակական
Երկշաբաթաթերթ

Հրավեր

1200 թուման
Հայաստանում 320 դրամ



ԻՐԱՆԻ ՓԱՅՆՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԼՈՆԴՈՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽՍՂԵՐՈՒՄ

MARINI

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 6** **Նոր գիրք Իրանա-Ամերիկեան յարաբերությունների մասին**
- 7** **ԻԻՀ խորհրդարանում հայության պատգամաւոր Կարէն Խանլարեանի այցը «Յայտ»-ի խմբագրատուն**
- 8** **Չեո, որն աննկատ հոսում է մեր կողքին Քարմէն Ազարեան**
- 11** **Ճեղասպանության ճանաչման, Օբամայի եւ այլ «պետայրերի» մասին Զրաչ Ստեփանեան**
- 16** **Քանաստեղծություններ Բեհզադ Աբդի**
- 18** **Առիւծ Արջան Կոլիա Տէր Յովհաննիսեան**
- 19** **Երկրաշարժ Իրանի Ատրպատականում**
- 20** **Հիտլերը մերօրեայ Փարիզի փողոցներում**
- 22** **Խոհանոց**
- 23** **Տնտեսուհու անկիւն Քաթրին Եաղուրի**
- 23** **Մարզանք Արման Տէր Ստեփանեան**
- 26** **Ժամանց**

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ սարի, քիւ129, Օգոստոս 29, 2012,
1200 րուման
Հայաստանում 320 դրամ



- 2** **Իրանի եւ Հայաստանի մարզիկները Լոնդոնի Օլիմպիական խաղերում**
- 2** **Իրանի օլիմպիական կարաւանը 12 մեդալով տուն վերադարձաւ**
- 4** **Հայաստանի մեդալակիրները**

Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

- | | | | | |
|--|-----------|--|-----------|---|
| 2 Այս համարի հայերէն էջերում | 8 | Միքայէլ Վարանդեան | 12 | Յուշեր իմ ծննդավայր Աբաղանից-2 |
| 5 Գժար Ընտրություն՝ Եւրոպա թե՛ Եւրասիա | | Թուրաջ Խոսրուի | | Ալվարո Թորոսեան |
| 6 Գաշնակցության դերը Իրանի սահմանադրական յեղափոխության մեջ-2 | 11 | Մի բանաստեղծություն «Ջընդիատուղ եղանակ» գրքից
Ազատ Մաթեան | 14 | Յովիկ Պասպարեան՝ Երգահան-խմբավար Թարգմ. Մայիս Խելիաթգադէ |

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտոնատէր՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմէն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմէն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարզական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուրի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճէն՝ 66495208</p> <p>hoosy@inbox.com www.hoosy.com</p>
---	---	---	--



ԻՐԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ

Ամառային 30-րդ օլիմպիական խաղերը իր ավարտին հասաւ Լոնդոնում: Խաղեր, որի վերջին օրը, թէւ այնքան էլ բարեբեր չեղաւ իրանցի մարզիկների համար, բայց եւ ընդհանուր առմամբ ամենապանծալի մրցաշրջանն էր Իրանի համար: Եթէ Մեհդի Թադաւիի անհաւատալի պարտութիւնը՝ կուբայեցի Իւան Լուիզի դէմ եւ Ռեզա Եազդանիի ոտքի վնասուելը եզրափակիչ մարտի վերջին պահին տեղի չունենար, եւ Իրանի ազատ ոճի ըմբշամարտի մարզախմբին կաթաճահար չանէր, իրանցի մարզիկների ոսկի մեդալների թիւը մինչեւ մրցութիւնների ավարտը սրանից աւել կը լինէր եւ պատմական անմախաղէպ յաղթանակ կը լինէր մեզ համար: Այդուհանդերձ Օլիմպիական խաղերի այս շրջանը, որը Իրանի 15-րդ մասնակցութիւնն էր, պակաս յաղթական չեղաւ եւ մեր մարզիկները յաջողեցին շահած մեդալների թիւը երկնիշ դարձնել, որոնցից 4-ը ոսկէ լինելով, այս առունով եւս գերազան-

ԼՈՆԴՈՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ ՄԵՂԱՆՆԵՐ ԸՆԿՆՍԻ ԻՐԱՆՅԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ

ՈՍԿԷ ՄԵՂԱԼ

- Յամիդ Սուրեան, ազատ ոճի ըմբշամարտ, 54 կգ
- Քեհդադ Սալիմի, ծանրամարտ, +105 կգ
- Ղասեմ Ռեզայի, յունահռոմէական ոճի ըմբշամարտ, 96 կգ
- Օմիդ Նորուզի, յունահռոմէական ոճի ըմբշամարտ, 60 կգ

ԱՐԾԱԹԷ ՄԵՂԱԼ

- Սաջադ Անուշիրւանի, ծանրամարտ, +105 կգ
- Էհսան Յադադի, թեթեւ ատլետիկա

- Սադեղ Գուդարզի, ազատ ոճի ըմբշամարտ, 74 կգ
- Նաւաբ Նասիրշուալ, ծանրամարտ, +105 կգ
- Մուհամմեդ Բաղերի Մոթամեդ, տեկուանդօ, 68 կգ

ԲՐՈՆՁԷ ՄԵՂԱԼ

- Քիանուշ Ռոստամի, ծանրամարտ, 85 կգ
- Էհսան Լաշգարի, ազատ ոճի ըմբշամարտ, 84 կգ
- Քոմէյլ Ղասեմի, ազատ ոճի ըմբշամարտ, 120 կգ



ԿԱՐԱՒԱՆԸ 12 ՄԵԳԱՆՈՎ ՏՈՒՆ ՎԵՐԱԳԱՐՁԱՒ



ցել 2000-ի Սիդնեյի մրցաշրջանին:

Այս շրջանում Իրանը առաջին անգամայ համար յունահռոմէական ոճի ըմբշամարտում ոսկէ մեդալ շահեց, այսինքն ծանրամար-

տից, ըմբշամարտից եւ տեկուանդոյից բացի, եւս մի մարզաճիւղում նւաճում արծանագրւեց մեր մարզանքի պատմութեան մէջ:

Բոլոր այս նւաճումները կատարւեց Լոնդոնում, հէնց նոյն քա-

ղաքում, որը դեռ սրանից 64 տարի առաջ, այսինքն 1948 թւականի Օլիմպիական խաղերում պակաս բարեբաստիկ չեղաւ Իրանի համար, որն իր առաջին մասնակցութիւնից 48 տարի անց՝ երկրորդ անգամը լինելով պաշտօնապէս մասնակցեց այդ խաղերին եւ յաջողեց մեդալ շահել:

Իրանը սկսեալ 1900 թւականից պարբերաբար մասնակցել է օլիմպիական խաղերին, եւ այդ ընթացքում 48 մեդալ նւաճել, որն այս տարւայ 12-ի գումարումով, 60-ի հասաւ: Աւելացնենք, որ այս 60 մեդալները նւաճել են 50 մարզիկներ: Մինչ այս Իրանի ազատ ոճի ըմբշները՝ մեդալներ շահած 33 մարզիկներով ռեկորդակիր են, որից յետոյ երկրորդ տեղում է ծանրամարտը՝ 16, երրորդ տեղում են միասնաբար տեկուանդօն ու յունահռոմէական ոճի ըմբշարտը՝ հինգական մարզիկներով, եւ վերջում թեթեւ ատլետիկան՝ 1 մարզիկով:



Լոնդոնում կայացած Օլիմպիական 30-րդ շրջանի խաղերի աւարտին ԱՄՆ-ը 48 ոսկէ մեդալով առաջին տեղը գրաւեց, Չինաստանը 38 մեդալով՝ երկրորդ, իսկ Մեծ Բրիտանիան 29 մեդալով՝ երրորդ հանդիսացան:

Իրանը 4 ոսկէ, 5 արծաթէ եւ 3 բրոնզէ մեդալներով աշխարհում 17-րդ տեղը զբաղեցրեց, որը նախորդ 14 շրջանների համեմատութեամբ լաւագոյն արդիւնքն է համարում:

Վերջում աւելացնենք նաեւ, որ այս շրջանի խաղերում 44 համաշխարհային, եւ 117 օլիմպիական նոր ռեկորդներ գրանցւեցին:

ԼՈՆԴՈՆԻ ՕԼԻՄՊԻԿԱԿԱՆ ՀԱՅ ՄԵԴԱԼԻՍՏ



Արտեմ Ջուլֆալյան

Լոնդոնի 30-րդ Օլիմպիական խաղերի փոխչեմպիոն Յունահունական ըմբշամարտի 74 կգ քաշային կարգի եզրափակիչում գոտենարտեց ռուսաստանցի աշխարհի չեմպիոն Ռոման Վլասովի հետ



Հռիփսիմե Խորշուդեան

2012 թականի օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր՝ ծանրամարտի կանանց գերծանր քաշայինների մրցապայքարում



Արթուր Ավետիսյան

20-ամեայ գիւմրեցի ըմբիշը փայլուն ոճով յաղթեց կուբացի Էստրադային եւ նաճեց 96 կգ քաշային կարգում բրոնզե մեդալ

ԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԱԿԻՐՆԵՐԸ

Լոնդոնի Օլիմպիական մարզադաշտում կայացել է 2012 թ. օլիմպիական խաղերի փակման արարողութիւնը: Միջոցառման շրջանակներում ելոյթ են ունեցել Muse, Spice Girls, Beady Eye խմբերը, կիթառահար Բոյայան Մէյը եւ այլք:

Միջոցառման աւարտին մարտի էլ է օլիմպիական կրակը, ինչից յետոյ ելոյթ է ունեցել The Who խումբը:

Օլիմպիական խաղերն սկսել էին Յուլիսի 27-ին:

Առաջին հորիզոնականը՝ մեդալների թով գրաւել է ԱՄՆ-ը՝ նաւաճելով 46 ոսկէ, 29 արծաթէ եւ 29 բրոնզէ մեդալ: Երկրորդ տեղում Չինաստանն է 38 ոսկէ, 27 արծաթէ եւ 22 բրոնզէ մեդալով, իսկ երրորդը՝ Մեծ Բրիտանիան, որը նաւաճել է 29 ոսկէ, 16 արծաթէ եւ 19 բրոնզէ մեդալ:

Հայաստանը 30-րդ ամառային օլիմպիական խաղերում զբաղեցրել է 60-րդ տեղը՝ նաւաճած 3 մեդալով: Հայաստանը ներկայացնող 24 մասնակիցներից Արսէն Ջուլֆալակեանը յունահռոմէական ոճի ըմբշամարտի մրցոյթում նաւաճեց արծաթէ մեդալ, Արթուր Ալեքսանեանը՝ բրոնզէ մեդալ: Հռիփսիմէ Խուրշուդեանը ծանրամարտում եւս արծաճնացաւ բրոնզէ մեդալի:

Յաջորդ Օլիմպիական խաղերը կը կայանան 2016 թ.-ին՝ Ռիո դէ-ժանէյրո քաղաքում: Օլիմպիական խաղերի փակման արարողութեան ժամանակ Ռիոյի քաղաքապետ Էդուարդո Պաէսը Լոնդոնի քաղաքապետ Բորիս Ջոնսոնից արդէն ստացել է օլիմպիական դրօշը:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱՆՅԻՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՌԵՒՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԸ ՆԻՐԻԵՅ ԻԻՀ ԱՌԵՒՏՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԱՀԱԻԱՆՂԵԱՆԻՆ

2012 թւականի օգոստոսի 21-ը պատմական օր էր «Հայաստանում իրանցիների ազատ առեւտրի կենտրոն» ընկերութեան համար: ԻԻՀ առեւտրի պալատում տեղի ունեցաւ յատուկ հանդիսութիւն, որի ընթացքում ՀՀ դեսպան՝ Գրիգոր Արաքելեանի միջոցով վերոյիշեալ ընկերութեան առաջին բաժնետոմսը նւիրեց Իրանի առեւտրի պալատի նախագահ՝ Սոհամադ Նահաւանդեանին:

Պարոնայք Արաքելեանը եւ Նահաւանդեանը առանձին խոսքերով գնահատեցին նորաստեղծ ընկերութեան դրական դերը երկու երկրների յարաբերութիւնների զարգացման գործում: Արտայայտեցին նաեւ Իրան-Հայաստան առեւտրի պալատի նախագահ՝ Լեւոն Ահարոնեանը, գործադիր տնօրէն՝ Շահռույի Ջահիրին, ու վերջինիս տեղակալ՝ Ռեզա Հէյ-



դարին: Հանդիպման ներկայ էին նաեւ «Հայաստանում իրանցիների ազատ առեւտրի կենտրոն» ընկերութեան վարչութեան անդամներ՝ Մանուչէիր Սեփեիրին, Ասգարեանը եւ Փիրումեանը:

Հանդիսութեան աւարտին ԻԻՀ առեւտրի պալատի նախագահ Սոհամադ Նահաւանդեանը պարգեւատրուեց առիթին պատշաճ յուշատախտակով:



ՆՈՐ ԳԻՐՔ ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2011 թվականին, Երևանում ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի կողմից լոյս է տեսել Գոհար Իսկանդարեանի գրչին պատկանող «Իրանա-ամերիկեան յարաբերությունները 1942-1960 թվականներին» արժեքալոր աշխատությունը, որն ընթերցողներին ենք ներկայացնում՝ արտասպելով գրքի ներածությունը:

Մերձալոր եւ Միջին Արևելքում տեղի ունեցող իրադարձությունները հասկանալու համար առաջին հերթին պետք է ուսումնասիրել այդ տարածաշրջանի խոշոր պետությունների պատմությունը, դաւանանքը, ժողովրդի աշխարհայեացքը, ւաւանդոյթները: Մերձալոր եւ Միջին Արևելքի զարգացումների վրայ, տարածաշրջանային բոլոր պետություններն էլ ունեն ազդեցութեան իրենց չափաբաժինը, սակայն կան այնպիսի պետություններ, որոնք գլխաւոր դեր ունեն դրանում: Դրանք թւին են պատկանում Իրանը, Թուրքիան, ժամանակին՝ նաեւ Իրաքը:

1973թ. Իրանի, նաւթարդիւնաբերութեան ազգայնացումից յետոյ, տնտեսական եւ ռազմական ներուժն այն աստիճան մեծացաւ, որ այդ երկիրը սկսեց յաւակնել տարածաշրջանային գործերը կարգաւորողի դերին: Բնականաբար դա չէր կարող դուր գալ հզօր տէրութիւններին, քանի որ նրանք կարող էին դուրս մնալ էներգակիրներով հարուստ տարածաշրջանային գործընթացներից:

Սակայն, Իրանը իր հզօրացման նման աստիճանին հասնելու համար ինչ-որ տեղ պարտական էր նաեւ իր երբեմնի դաշնակից Միացեալ Նահանգների հետ հա-

մագործակցութեանը: Որպէս փաստարկ բերենք այն հանգամանքը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ Իրանի տնտեսութիւնը՝ արդիւնաբերութիւնը, բանակաշինութիւնը մեծ ներդրումների կարիք ունէին: Այն հիմնականում իրականացւեց Միացեալ Նահանգների կողմից ֆինանսական, ռազմական, տնտեսական օգնութիւնների տեսքով, ինչպէս նաեւ Իրան ուղարկւեցին խորհրդականներ, որոնք փորձեցին կարգաւորել Իրանի վերոյիշեալ գրեթէ բոլոր ոլորտները: Բնականաբար, Միացեալ Նահանգներն այդ ամէնն անում էր առաջին հերթին ելնելով տարածաշրջանային իր շահերից:

Իրանն այսօր էլ գտնուում է համաշխարհային հանրութեան ուշադրութեան կիզակէտում: Եւ եթէ ցանկանում ենք հասկանալ, թէ ինչու են այդքան բարդ ու հակասական իրանա-ամերիկեան յարաբերութիւններն, ապա պետք է հայեացք գցել նրանց յարաբերութիւնների պատմութեան վրայ: Այդ առումով, սոյն ուսումնասիրութիւնը յատուկ նշանակութիւն է ձեռք բերում: Իրանա-ամերիկեան յարաբերութիւնների հետազօտութիւնը հնարաւորութիւն է տալիս ճիշտ գնահատել ստեղծած իրավիճակը եւ տարածաշրջանում



խաղաղութեան հաստատման հեռանկարները: Մերձալոր եւ Միջին Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականութեան վերաբերեալ գոյութիւն ունեն բազմաթիւ հետազօտութիւններ, սակայն յատկապէս իրանա-ամերիկեան յարաբերութիւնների շուրջ, այն էլ նոր լոյսի ներքոյ, յատուկ ուսումնասիրութիւն դեռեւս կատարած չէ: Սա հայ արևելագիտութեան մէջ իրանա-ամերիկեան յարաբերութիւնների ուսումնասիրման առաջին փորձն է: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է 1942 թ.ից սկսած այն պահից, երբ ամերիկեան զօրքերը մտան Իրան, մինչեւ 1960թ.՝ Սպիտակ յեղափոխութիւնը:

Աշխատութիւնում նորովի է մեկնաբանուում ԱՄՆ-ի քաղաքականութեան ազդեցութիւնն Իրանում, ներկայացուում նրա ձեռքբերումներն եւ բացթողումները, վերլուծութեան ենթարկուում Թեհրանի եւ Վաշինգտոնի վարած ար-



տաքին քաղաքականութիւնը, որը սերտ կապի մէջ էր գտնուում տարածաշրջանային գործընթացների հետ:

Աշխատութիւնն արժեքաւոր է նրանով, որ օգտագործել են երկու երկրների պետական այրերի եւ նշանաւոր դէմքերի անձնական յուշերը, աշխատութիւնները, որը թոյլ է տալիս նորովի մօտենալ իրանա-ամերիկեան յարաբերութիւնների պատմութեանը՝ գերօմնալով խորհրդային գրականութեան կարծրատիպերից: Առաջին հերթին անհրաժեշտ է յիշատակել աշխատութեան համար չափազանց կարեւոր գրականութիւն հանդիսացող աշխատութիւնները եւ յուշագրութիւնները: Դրանք են. Մոհամմադ Ռեզա շահ Փահլաւիի, նրա քրոջ՝ Ա. Փահլաւիի, Ա. Միլսպոյի, Ա. Դալլեսի, Ք. Ռուզելտի, Է. Իդենի ելոյթները եւ աշխատութիւնները, ինչպէս նաեւ վերջերս գաղտնագերծուած TPAJAX գործողութեան ծրագիրը ու մի շարք

այլ փաստաթղթեր:

Նոր փաստերի առկայութեամբ՝ ներկայացուում է ԿՅԿ-ի կողմից իրականացուած «Այաքս» գործողութիւնը: Աշխատութիւնում նորովի է լուսաբանուում Իրանի անդամակցումը Բաղդադի պակտին եւ ռազմական պայմանագրի կնքումը Միացեալ Նահանգների հետ, ինչը բխում էր նաեւ Իրանի շահերից:

Օգուելով առիթից՝ կը ցանկանայի խորին երախտագիտութիւնս յայտնել Արեւելագիտութեան ինստիտուտի գործընկերներիս՝ աջակցութեան եւ ջերմ վերաբերմունքի համար, մասնաւորապէս՝ գիտական ղեկավար, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, իրանագետ Վ. Ա. Բայբուրդեանին՝ ուսումնասիրութեան տարիներին գիտական արժեքաւոր խորհուրդներ տալու համար:

ԻԻՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆՈՒՄ ԹԵՂԱՆԻ ԵՒ ՇԻՄԻԱՅԻՆ ԻՐԱՆԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՏՎԱՄԱՒՈՐ ՃՐՏԳ. ԿԱՐԷՆ ԽԱՆԼԱՐԵԱՆԻ ԱՅՅԸ «ՅՈՅԱ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ

Իրանական Մորդադ ամսի 17-ը (Օգոստոս 7) Իրանում «Լրագրողների օր» է յայտարարուած: «Յոյս»-ի աշխատակազմին այս օրը շնորհաւորելու համար, մեր գրասենեակն այցելեց Իրանի խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր ճրտգ. Կարէն Խանլարեանը:

Չանդիպման ընթացքում հիմնականում խօսեց այն մասին, թէ «Յոյս»-ը լինելով երկշաբաթաթերթ, չի կարող արագ լրատութեան ասպարէզում մրցակցել կայքերի եւ այլ լրատւական միջոցների հետ, բայց փոխարէնը աւելի մեծ դրական դեր կարող է խաղալ համայնքի եւ հայութեան կարեւոր հարցերի քննարկման ու վերլուծութեան ուղղութեամբ: Իմիջիայլոց ասենք, որ դա փորձել է անել թերթս, եւ պիտի շարունակի նաեւ ապագայում:

Չարկ է նշել, որ այս հանդիպումը կարճ տեւեց, եւ առիթը չունեցանք խօսել երկրի խորհրդարանում հայ պատգամաւորի դերի, մասնաւորաբար՝ պարոն Խանլարեանի տարած աշխատանքների մասին: Իհարկէ միայն երեք ամիս է անցել նրա՝ այդ պաշտօնը զբաղեցնելուց, եւ երեւի աւելի երկար ժամանակ է պէտք, այդ մասին հանգամանօրէն խօսելու համար: Վերջում պրն. Խանլարեանը խոստացաւ մօտ ապագայում առանձին հարցազրոյցով անդրադառնալ այդ թեմային:

ԳԵՏ, ՈՐՆ ԱՆՆԿԱՏ

ՄԵՐ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐ ԳԵՏՆ ԱՅՍՕՐ ԼՔԻԱԾ ՈՒ ՄՈՌԱՃԻԱԾ

Քարմեն Ազարեան

Հայաշատ Սասունը թաղամասի միջով հոսող գետը՝ մեր գետը, Նարմաքի կամ Ջարքեշի գետ կոչվածը, մի ժամանակ զուլալ էր ու խոխոջուն, որը հոսում էր Թեհրանի հիւսիսային լեռներից, իր հետ մեր խղճուկ թաղին բերում բազմապիսի բարիքներ: Յիսունը բուլորած թաղեցիները երազանքով են յիշում իրենց խաղերը այդ պարզ ու մաքուր ջրերում, որը տեղ-տեղ աւազանի վերածված երեխաների համար լողաւազան, իսկ մեծերի համար գորգ ու շորեր

լւացելու յարմարանք էր ստեղծում: Երանի էին այն օրերը... Ոչ շատ խորը հունով հոսող գետը մարդիկ անցնում էին քարերի վրայով, իսկ երբ անձրեւում ու հեղեղում էր, մեծերն ստիպւած փոքրերին շալակած ջրի միջով թրջելով մի կերպ անցնում էին: Կամուրջներ չկային, ուրիշ ճար չկար, իշխում էր դեռ բնութիւնն ու իր օրէնքները: Հայկական համայնքը սկզբում հաստատուել էր գետի ձախ ափին, ուր եւ կառուցւեցին առաջին հայկական դպրոց-

ները, եկեղեցին ու տները, սակայն շուտով տարածւեց գետի հակառակ կողմը եւս: Հետեւաբար երթեւեկութիւնն ու գետն անցնելը պարտադիր ու անխուսափելի դարձաւ: Շատ չանցած տան առելտրով զբաղւող մի հայ կնոջ «Բոնգչի» մականունով յայտնի Նազիկի ջանքերով ու թաղեցիների օգնութեամբ կառուցւեց առաջին կամուրջը, որը հէնց կոչւեց «Նազիկի փոլը» անունով: Նրան յաջորդեց երկրորդ կամուրջը, որին թաղեցիները «Սիմոնի



ՀՈՍՈՒՄ Է ՄԵՐ ԿՈՂՔԻՆ





**Լուսանկարները՝
Փրենի Պողոսեան**

փոլ» էին ասում, հաւանաբար նրա մօտակայ Սիմոնի վարսավիրանոցի շնորհիւ: Տարիներ անցան եւ կառուցւեցին եւս մի քանի կամուրջներ թէ՛ թաղեցիների նւիրատուփիւններով եւ թէ՛ քաղաքապետարանի միջոցներով:

Կեանքը զարգանում էր իր հունով, եւ մեր գետն էլ չէր կարող զերծ մնար նրա հետեւանքներից: Տարիների ընթացքում, արդիւնաբերական հսկայ ու մարդաշատ Թեիրան քաղաքի ձեւաւորումով այդ մաքուր ու լեռնային գետից լոկ շատ հեռուն թւացող անմեղ յուշեր մնացին: Երբեմնի երազային, մեր մանկութեան խաղավայր գետից արդէն բան չմնաց: Հոսող ջուրը գնալով ու գնալով աւելի աղտոտւեց ու պղտորւեց՝ նրա մէջ թափուղ առուների կեղտաջրով ու անխիղճ մարդկանց նետած աղբակոյտով... Եւ բնականաբար այն դարձաւ մկների խաղավայր: Վերջին երկու տասնամեակներում քաղաքի մաքրագործման ու



վերակառուցման պլանների մէջ ներառւեց նաեւ մեր խեղճ ու արդէն լքած գետը: Հունը փորեցին ու պատերի պէս սալապատեցին, բայց դա էլ ցաւօք նրան չվերադարձրեց իր բնական գեղեցկութիւնն ու մաքրութիւնը եւ դեռ աւելին՝ աւելի ակներեւ դարձան ջրում լողացող աղբերն ու կեղտը: Եւ այսպէս մարդիկ սկսեցին աննկատ անցնել այդ տհաճ տեսարանի կողքից, եւ մի խօսքով մոռանալ այդ գետի գոյութեան մասին. գետ, որն, ինչ խօսք, նոյնիսկ այսօր, երբ մենք լքել ենք նրան, իր

մէջ ընկղմելով ու թաղելով, տանում ու հեռացնում է մեր կեանքի յոռի կողմերը, տհաճ գոյացումները՝ դարձեալ ծառայելով մեզ: Երանի թէ այն կարողանար տաներ ոչ միայն միւթական աղտեղութիւնը, այլեւ հոգեւոր մութ կողմերը, որպէսզի մարդիկ դառնային աւելի լուսամիտ ու բարի, որոնց գոյութեան լոյսով ողողւած գետը նոյնպէս մաքուր էր ու վերադառնար իր ակունքներին՝ պարզ ու զուլալ ջրով: Երանի թէ...

ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ, ՕՐԱՄԱՅԻ ԵՒ ԱՅԼ «ՊԵՏԱՅՐԵՐԻ» ՄԱՍԻՆ

Հրաչ Ստեփանեան

«Յոյս»-ի խմբագիր Ռոբերթ Սաֆարեանը թերթի 121-րդ համարում տեսակետ էր յայտնել թէ հայոց ցեղասպանութիւնը շահագործման նիւթի է վերածուել համաշխարհային քաղաքական շուկայում: Թերթի 123-րդ համարում Ռուբէն Սաֆարեանը խիստ քննադատել էր Ռոբերթ Սաֆարեանին, արդարացնելով հայերի դիմումը Օբամային եւ այլ «պետայրերին» ցեղասպանութեան ճանաչման համար: Թերթի յաջորդ համարում Քարմէն Ազարեանը իր հերթին քննադատել էր Ռուբէն Սաֆարեանի յօդածը, առաջ քաշելով նոր հարցեր Մեծ Եղեռնի պատմութեան ուսումնասիրութեան եւ մեր հզօր ու թոյլ կողմերի յայտնաբերման մասին: Այս երեք յօդածներում արտայայտած են մտքեր ցեղասպանութեան ճանաչման, հայ-թրքական յարաբերութիւնների, Հրանտ Դինքի գաղափարների եւ ընդհանրապէս հայկական հարցի վերաբերեալ, որոնք արժանի են ուշադրութեան եւ որոնց, թէկուզ ուշացումով, հարկ է անդրադառնալ հանգամանօրէն:

1 -Ռուբէն Սաֆարեանը, ըստ երեւոյթին, մեծ համարում ունի «քաղաքակիրթ աշխարհի բարձրաստիճան պետայրերի» մասին, որոնք իբր ուզում են «սրբագրել մարդկային պատմութեան անցեալի սխալները»: Որեւէ հայ, որ ծանօթ է հայկական հարցի պատմութեանը դժար թէ հաւատայ այդ պետայրերի բարի նպատակներին: Հայոց պատմութեան մեր տարբեր գրքերն ու դասագրքերը մէկ կէտում համաձայն են որ քաղաքակիրթ

պետութիւններն ու նրանց պետայրերը աւելի քան քառասուն տարի հայերի գլխին դիւանագիտական խաղեր խաղալուց կամ, ինչպէս գրում են, հայերի արիւնով առետուր անելուց յետոյ, երբ արդէն Արեւմտեան Հայաստանը հայաթափուեց, լքեցին հայերին եւ գնացին իրենց քաղաքական բիզնեսի ետեւից: Եւ ինչպէս տեսնում ենք, նոյն արիւնոտ բիզնեսը շարունակուել է առ այսօր աշխարհի տարբեր մասերում՝ մերօրեայ պետայրերի միջոցով: Մենք պարտաւոր ենք առաջնորդել մեր պատմութեան դասերով եւ ոչ թէ «քաղաքակիրթ» պետայրերի խոստումներով ու խօսքերով: 1920-ական թւականների սկզբում, ահաւոր տառապանքներից ու կորուստներից յետոյ, հայերը վերջապէս համոզուեցին որ իզուր են յոյս դրել այդ քաղաքակիրթ պետութիւնների վրայ, որ այդ պետայրերը եղել են պրոֆեսիոնալ դիւանագետ-խաբէրացիներ, որոնց լարախաղացութիւններով եւ ճամարտակութիւններով տարւած հայ ժողովուրդը հասաւ իսպառ ոչնչացման անդունդի եզրին: Այդ մեծարժոյ պայրերին Ա. Իսահակեանը անւանել է դեւ-դիպլոմատներ, սրիկաներ, լրբեր եւ այլն, իսկ սրանց պոչը բռնած հայ ղեկավարներին, սրանցից հող ու հայրենիք մուրացողներին Չարենցը կոչել է «հացկատակներ, մթին սերմանողներ քամու ու մուրացկանութեան»:

Եւ այսպէս, «քաղաքակիրթ» պետութիւններից հիասթափուած հայ ժողովուրդը, բացի Սփիւռքում ծւարած որոշ տարրերից, ծեռք քաշեց տասնամեակների իր պատրանքներից եւ նւիրեց իր

յօշուտած հայրենիքի փրկւած վերջին հողակտորի վերաշինութեան գործին: Արդիւնքը աւերակ ու արմաքամ Հայաստանի վերածնունդն էր: Խորհրդային Հայաստանի առաջին քսան տարում Հանրապետութեան բնակչութիւնը գրեթէ կրկնապատկուեց: Մի պահ երեւակայէք, որ ներկայ անկախ Հայաստանի այս քսան տարում երկրի բնակչութիւնը կրկնապատկւած լինէր, թող որ ոչ մի Օբամա էլ հայոց մասին խօսած չլինէր: Ո՞րը կը լինէր ցանկալի՝ հէնց հայկական հարցի տեսանկիւնից դիտուած՝ ստեղծել զարգացող ու կայուն Հայաստան, թէ՞ աչքերը տնկել Օբամայի շրթերին, թէ երբ է արտասանում «Genocide»-ը՝ բառը, որ հայերի բախտը բացւի: Կարելի է պատկերացնել նաեւ հակառակը: 1920-30-ական թւականներին Հայաստանի բնակչութիւնը չաճէր (եւ դեռ այսօրայ նման մի բան էլ պակասէր), բայց փոխարէնը օրւայ պետայրերը- Մուսոլինին, Հիտլերը եւ ուրիշներ- դատապարտած լինէին հայոց ցեղասպանութիւնը. ո՞րն էր աւելի կենսական հայոց ապագայի համար: Այն, ինչ մնաց հայերին՝ դա տքնաջան աշխատանքով վերածնւած իրենց հայրենիքն էր, իսկ բոլոր «հայասէր» ու «հայապաշտպան» պետայրերի խօսքերը յօդս ցնդեցին:

Այսօր դարձեալ Արեւմուտքի պետայրերը հետաքրքրուած են հայերով: Այս փուլում նրանք նպատակ ունեն Կովկասից դուրս մղել Ռուսաստանին ու Իրանին, բայց այստեղ նրանց խոչընդոտում է այդ երկու երկրների գործընկեր Հայաստանը: Արեւմուտքն

ուզում է Վրաստանից եւ Ադրբեյջանից յետոյ իր հետ ունենալ նաեւ Հայաստանը: Դրան հասնելու համար արեւմտեան պետայրերը, բոլոր խօսքերի ու խոստումների հետ, լայնօրէն չարաշահելու են նաեւ ցեղասպանութեան բառը: Նրանք ամէն դերասանութիւն կանեն, միայն թէ Հայաստանը ներքաշեն իրենց ազդեցութեան ոլորտը, իսկ յետոյ Հայաստանի գլխին ինչ գալիս է՝ թող գայ: Վերջինը՝ այդ դերը խաղաց Սարքոզին, ցեղասպանութեան ճանաչումով հմայած հայերին նախ ոգեւորելով մինչեւ երկինք, եւ վերջը նրանց թողնելով՝ շնած ու բերանբաց: Բայց թում է թէ կոյր հաւատը դէպի քաղաքակիրթ պետայրերը նորից ամրանում է հայերի մէջ: Ըստ երեւոյթին արեւմտեան քարոզչամեքենան անում է իր գործը, եւ դեռ կը գտնեն հայեր, որ կը շարունակեն դիմել նորանոր օբամաների եւ սարքոզիների, մինչեւ մի գեղեցիկ օր նրանք արտասանեն ցեղասպանութիւն բառը, իհարկէ եթէ մինչ այդ Հայաստանն արդէն հայաթափուած չլինի:

Եզրակացնենք: Հայաստանի մէկ գիւղի վերաշինութիւնը հազար անգամ ասելի արժէ, քան հազար հայասիրական խօսքեր, որ մեզ շռայլել են քաղաքակիրթ պետայրերը՝ Գլադստոնից մինչեւ Սարքոզի:

2-ի՞նչ նպատակ են հետապնդում քաղաքակիրթ երկրների պետայրերին դիմող հայերը՝ ցեղասպանութեան ճանաչման հետ կապած: Ոչ մէկից յստակ պատասխան չէք ստանայ: Յամենայն դէպս Ռուբէն Սաֆարեանը այսպէս է ասում. «Միջազգային առումով հայոց ցեղասպանութեան համաշխարհային ճանաչեցման բուն նպատակը վրէժխնդրութիւն կամ ներկայիս Թուրքիայի տերիտորիայի մի մասը Հայաստանի Հան-



րապետութեան տարածքին կցելու իմաստով չէ, այլ միջազգային արդարութեան եւ մարդկային վեհ արժանապատուութեան վերականգնումն է»: Հեղինակը իր յօդուածի այլ տեղերում եւս խօսում ու կրկնում է մարդկային արդարութեան եւ համամարդկային արդարութեան վերականգնման մասին: Այդ խօսքերը առատօրէն գործածուում են նաեւ «մարդու իրաւունքների պաշտպան» քաղաքակիրթ երկրների պետայրերի կողմից: Եւ մեր մէջ որոշները սպասում են, որ օբամաները գալու են ինչ-որ մարդկային արդարութիւն վերականգնելու եւ մխիթարելու հայերին: Պրն. Սաֆարեան, ով ուզում է թող նման մարդասիրական լուզումներին հաւատայ, բայց այդ քաղաքակիրթ պետայրերի մարդասիրութիւնը ճաշակած եւ նրանց աչքի առջեւ ցեղասպանւած հայ ժողովրդին վայել չէ այս խօսքերով տարւելը: Այդ խօսքերին հաւատալու եւ յուսախաբելու արդէն բաւական փորձառութիւն ունի հայ ժողովուրդը: Արդեօք նորից պիտի նա իրեն փորձութեան ենթարկի: Հայոց տառա-

պանքի, ջարդերի եւ ցեղասպանութեան տարիներում ժամանակի պետայրերը որքա՞ն խօսքեր են ասել հայերին՝ մարդկային արդարութեան վերականգնման վերաբերեալ եւ այդ մասին որքան դիպուկ է ասել հայոց տառապանքի երգիչ Սիամանթօն «Ո՛վ մարդկային արդարութիւն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ»: Դա նահատակ բանաստեղծի խօսքն է յուած «ապագայ սերունդներուն եւ մեր անցեալին տխրութեանն ի նւէր» եւ մենք պարտաւոր ենք չմոռանալ այն:

Մի այլ տեղ Ռուբէն Սաֆարեանը ասում է. «Հայերի իրաւունքն է աշխարհի ամենահզօր պետութիւն՝ Ամերիկայի նախագահից պահանջել պաշտօնապէս ճանաչելու հայոց «Genocide»-ը»: Նպատա՞կը: Այն, որ Օբաման ճնշում բանեցնի Ամերիկայի դաշնակից Թուրքիայի վրայ, որ սա «արժանի հատուցում կատարի իր նախկին հնազանդ ու պարտաճանաչ քաղաքացիների յետնորդներին»: Ո՞րն է այդ արժանի հատուցումը: Ռուբէն Սաֆարեանը յայտարարում է. «Թուրքիայի գործող կա-

ռավարութիւնը պարտաւոր է շուրջ 43 միլիարդ դոլար վճարել վերապրողներին:»

Պրն. Սաֆարեան, Թուրքիայի ուզածն էլ հօ հէնց այդ է՝ փակել հարցը դրամական փոխհատուցումով. թող իր նախկին հնազանդ հպատակների այսօրւայ հնազանդ ժառանգները գան, խօսեն հարցի մասին, սակարկեն, քաղաքակիրթ պետայրերն էլ կը միջնորդեն եւ վերջը այդ ժառանգները թող մի կլոր գումար ստանան, տանեն ծախսեն եւ ցեղասպանութեան հարցը արժանի կերպով լուծուած համարեն:

Պրն. Սաֆարեան, «Յոյս»-ի խմբագրի յօդուածը քննադատելիս գրել էք, որ նրա դժգոհութիւնը՝ թէ ինչու են հայերը Օբամայից պահանջել, որ նա անպայման օգտագործի Genocide տերմինը, «խորհել է տալիս յօդուածի իւրաքանչիւր հայ ընթերցողին»: Օգտագործելով ձեր գրելաոճը՝ թոյլ տւէք ասել, որ ձեր յօդուածում առաջ քաշած այն գաղափարը, որ օբամաների միջնորդութեամբ կարելի է դոլարային փոխհատուցումով լուծել հայոց ցեղասպանութեան հարցը, «խորհել է տալիս յօդուածի իւրաքանչիւր հայ ընթերցողին»:

3 - Վերոյիշեալ երեք յօդուածների առանցքային թեման հայոց ցեղասպանութեան ճանաչումն է: Հարց է առաջանում՝ արդեօք կարիք կա՞յ հայոց ցեղասպանութեան ճանաչման: Հաստատօրէն այո՛, բայց կարելորդ ճանաչումն է ժողովուրդների կողմից եւ ոչ թէ պետութիւնների: Պէտք է տարբերել հասարակութիւնը պետութիւնից: Հասարակութիւն ասելով հասկանում ենք ժողովրդական լայն զանգուածները եւ նրանց առաջադէմ ներկայացուցիչները՝ մտաւորականներ, գիտութեան եւ արւեստի գործիչներ, ինչպէս նաեւ ժողովրդական պատգամաւորներ: Ժողովուրդների կողմից հայոց ցե-

ղասպանութեան ճանաչման կարելորդը առաջ է քաշել 1970-ական թւականներին՝ հայ ազգային ազատագրական նոր շարժման ընթացքում: Արեւմտեան Հայաստանի ազատագրման նպատակով սկսած այդ շարժումը անհրաժեշտ էր համարում շրջապատի ժողովուրդների զօրակցութիւնն ունենալ հայ ժողովրդի իրաւունքների վերականգնման պայքարում, եւ առ այդ՝ նա աշխատում էր զինակցական կապ հաստատել տարածաշրջանի յեղափոխական ուժերի, յատկապէս Թուրքիայի բռնապետութեան դէմ պայքարող քրդերի եւ թուրքերի հետ: Նոր շարժումն այդպիսով ձգտում էր նաեւ ներկայութիւն դառնալ Թուրքիայում, մասնաւորապէս հայկական հողերում: Շարժման մասնակիցները նոր հայեացքով էին նայում հայոց նորագոյն պատմութեանը, հայերին եւ ոչ-հայերին ներկայացնում էին ճշմարտութիւնը հայոց ցեղասպանութեան մասին իր բոլոր կողմերով, ուրեմն եւ քօղազերծում էին քաղաքակիրթ աշխարհի բացասական դերը հայկական հարցում:

Հայերի համար ազատ ապրելու իրաւունքի ձեռքբերման, հայերի եւ տեղացի ժողովուրդների փոխըմբռնման եւ հայկական հողերում ներկայութիւն լինելու գաղափարը հետագայում զարգացրեց Հ. Դինքը, միայն թէ Դինքը բացառում էր զինեալ պայքարն ու ուժային լուծումները եւ հաւատում էր երկխօսութեանը. «Թուրքերու հետ երբ կը խօսիմ... ես միայն կը ջանամ, որ իրենք իրականութիւնը գիտնան», ասում է Դինքը, որովհետեւ «ադ ժողովուրդը մէկ բանի պէտք ունի՝ գիտակցելու, գիտնալու, սորվելու: Եւ մեր պայքարը մենք այդ ուղղութեամբ կը տանինք՝ ժողովրդին գիտցնել, կը խօսինք, կը գրենք, պայքարի մէջ ենք երկրի մէջէն»:

Ի դէպ, հիմա գրեթէ բոլոր հայ

կազմակերպութիւնները ուզում են Դինքին եւ իրենց ներկայացնել որպէս գաղափարակիցներ եւ ուղեկիցներ, սակայն Դինքի մտածելակերպը տարբեր է ներկայումս հայաշխարհում տարածուած մտայնութիւններից, մանաւանդ հէնց ցեղասպանութեան «ճանաչում»-ի հարցում: Դինքն ասում է՝ «չեն հաւատար ոչ Ֆրանսիայի, ոչ Գերմանիայի, ոչ միւսին, որ ցեղասպանութեան ճանաչման հարցը նոյն ատեն չեն գործածեր, չեն շահագործեր իրենց քաղաքականութեան Թուրքիոյ հետ ունեցած մարզին մէջ»: Դինքը համոզուած է, որ նախկինում հայերը սխալւել են օտար պետութիւններին դիմելով եւ հիմա նոյնիսկ քրդերին էլ խորհուրդ է տալիս հայերի սխալը չկրկնել:

Ըստ Դինքի՝ Թուրքիան պիտի ճանաչի հայոց ցեղասպանութիւնը, բայց թուրք ժողովրդի ճնշման տակ, եւ ոչ թէ մեծ պետութիւնների պահանջով կամ հրահանգով. «Օր մը չէ օր մը Թուրքիայի ժողովուրդը իր մէջէն պիտի ընդունի եւ իր պետութեան պիտի ճնշէ իրականութեան: Ես ասոր կը հաւատամ եւ ասոր համար կը պայքարիմ արդ»: Այս մասին Դինքը բացատրում է թէ իրօք կարելի է, որ օտար պետութիւնների ճնշման բերումով Թուրքիան ճանաչի հայոց ցեղասպանութիւնը, բայց «վերէն» կատարուած այդ ճանաչումը շատ բան չի փոխի: 1908 թին էլ երիտթուրքական վերնախաւը վերից ձեւականօրէն ճանաչեց Համիդեան ջարդերը, ընդունեց հայերի եւ թուրքերի հաւասարութիւնը, բայց ահա մի տարի չանցած տեղի ունեցաւ Ադանայի ջարդը, որովհետեւ թուրք նախապաշարուած հասարակութիւնը չէր փոխւել, որովհետեւ «վերէն եկած եւ չմարսուած այդ փոփոխութիւնը... ձեւ մըն է... բայց աւելի էական է վարէն վեր կատարուածը»:

Հայոց ցեղասպանութեան այսպիսի ճանաչումի համար Դինքը

մեծ աշխատանքի ասպարեզ է տեսնում. «Մենք ներսեն ինչ կրնանք ընել՝ անիկա կընենք», ասում է Դինքը եւ դիմելով թուրքիայից դուրս գտնող հայերին աւելացնում «Դուք ալ ձեր ձեռքէն եկածը կարենաք ընել...ինչ կրնաք ընել, գրեցեք՝ եթէ պատմաբան էք, խօսեցեք, դուրսէն չեն գիտեր՝ դուք պիտի արտադրեք թէ ինչեր կրնաք ընել»: Ներկայումս կարեւոր անելիք է շրջապատի ժողովուրդներին ճանաչեցնել թրքական շովինիզմի եւ պանթուրքիզմի էութիւնը, ներկայացնել հայկական հարցի ճիշտ պատմութիւնը, մանաւանդ պատռել պէտք է «քաղաքակիրթ» աշխարհի դիմակը այս հարցում: Օրինակ Սարքոզիին լորձնաշուրթ շողոքորթելու փոխարէն լաւ էր, որ հայերը «ազատատենչ» Ֆրանսիայից պահանջէին բացայայտել 1920-21 թւականներին Ֆրանսիայի կողմից Կիլիկիան թուրքերին յանձնելու ամբողջ թղթածրարը, որը վերջացաւ հազարաւոր հայերի նոր ջարդերով: Նմանապէս կարելի է պարզաբանել հայկական հարցում Անգլիայի տեւական թրքանպաստ կեցւածքը՝ Բեռլինի Կոնգրեսից մինջեւ Պոտսդամի Կոնֆրանս:

Բացայայտել պէտք է նաեւ Իսրայէլի կողմից հայոց ցեղասպանութեան ճանաչումի ներկայ խաղը, որն ուղղակի ծաղր ու վիրաւորանք է հայերի հանդէպ: Սիոնիզմը հիմնական դեր է ունեցել պանթուրքիզմի գաղափարաբանութեան ստեղծման մէջ, երկար տարիներ սիոնական լոբբիները պաշտպանել են թուրքիային հայերի դիմաց, իսկ այսօր Իսրայէլը մի կողմից նոր թափով զինում է Ադրբեջանին, ու միւս կողմից, հայերի աչքին թող փչելու համար, ահա բարեհաճել է քննարկել հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը: Եւ կան գլուխը կորցրած հայեր, որ իրենց դաճանջը քրքած վտանգը չտեսնելով, սպա-



Դինքը համոզուած է, որ նախկինում հայերը սխալուել են օտար պետութիւններին դիմելով

սում են հրաշագործ «ճանաչում»-ին: Տեսեք՝ այդ ճանաչման տենդը մինչեւ ո՞ր աստիճանի կարող է կուրացնել հայ մարդկանց: Իսրայէլից ցեղասպանութեան ճանաչում սպասող հայերը լաւ կանէին նախ սիոնիստներից պահանջէին հայ եւ իրեայ նոր սերնդի համար մեկնաբանել սիոնիստ-երիտթուրք եղբայրութեան պատմութիւնը եւ ընդհանրապէս խօսել հայկական հարցում սիոնիստ դեկավարների հակահայ դիրքորոշման մասին՝ թեոդոր Յերցլից մինչեւ Շիմոն Փերեզ:


4-վերջում մնում է մէկ հարց. ներկայ պայմաններում ի՞նչ հնարաւոր լուծում կարող է ունենալ հայկական հարցը, աւելի որոշակի՝ թուրքիայի տիրապետութեան տակ մնացած Արեւմտեան Հայաստանի հարցը: Մի կողմից ցեղասպանութեան «ճանաչում-հատուցում»-ի յոյսով մեծ պետութիւններին դիմելը թոււմ է անհեռակար, եւ որոշ իմաստով նոյնիսկ վնասակար, որովհետեւ հայ նոր սրնդի միտքը շեղում է

հայ կեանքի իրականութիւնից՝ ճօճելով նրանց ազգային երազանքների մէջ: Այդպիսիների մասին Դինքն ասել է, որ նրանք ցեղասպանութիւնը ճանաչող պետայրերին «Յիսուս Փրկիչներ» են կարծում: Միւս կողմից Հայաստանի Հանրապետութիւնից առայժմ միայն կարելի է սպասել, որ նա պահի ու պահպանի Արեւելեան Հայաստանը: Ըստ Դինքի՝ ներկայ իրադրութեան մէջ հայկական հարցի միակ հնարաւոր լուծումը կարող է սկսել հէնց թուրքիայում՝ կապած թրքացած, քրդացած եւ այլ հայերի ազգային ինքնութեան վերականգնման հետ: Դինքի վկայութեամբ «Թուրքիոյ մէջ այսօր հազարաւորներ կան, որ քաջութիւն ունին հրապարակաւ արտայայտելու, գիրքեր եւ յօդածներ գրելու, թէ իրենց պապերը հայ էին: Թուրքիոյ մէջ հիմա այս ուղղութեամբ շարժում կայ, եւ ես ըսեմ, որ ապագայ հայ կեանքի ամենամեծ եւ ամենայուսալի աշխատանքներէն մէկը կրնայ դառնալ անիկա: Եթէ թուրքիա եւրոմիութեան անդամ դառնայ օր մը, չեն սխալիր եթէ հայութիւնը

առնւազն երկու միլիոն եւս շատնայ»: Յայերի այս թւաքանակը այլ աղբիւրներում ներկայացուում է աւելի կամ պակաս: Թուրք հեղինակներից շատերը այն նշում են կէս միլիոն: Ինչեւէ, իրականութիւն է, որ Թուրքիոյ արեւելքում ընթանում է հայկական ազգային զարթօնքի շարժում, որը հայկական հողերում կարող է առաջացնել հայ տարրի զգալի ներկայութիւն: Յայացման այս շարժումն աշխուժացնելու միտումով, Դինքը ջերմեռանդօրէն պաշտպանում է Թուրքիայի օր առաջ մուտքը եւրոմիութիւն, այնինչ բովանդակ Սփիւռքում, չգիտէս ուն կամքով եւ ո՛ր հեռանկարով հակառակում են դրան, պահանջելով, որ Թուրքիան նախ ճանաչի հայոց ցեղասպանութիւնը: Դինքն ասում է, որ շարած է սփիւռքահայերի այս կեցւածքից, չէ՞ որ Թուրքիայի մուտքը եւրոմիութիւն առիթ կը ստեղծի, որ թաքուն հայերը ազատօրէն վերադառնան իրենց ինքնութեանը: Բարեբախտաբար Թուրքիայում ընթացող հայոց զարթօնքի շարժումը չի գտնուում օբանմաներին դիմող «ազգայիններ»-ի ձեռքում, այլ ընթանում է սրանցից անկախ, համապատասխան իր շրջապատի պայմաններին: Այս շարժումով միաժամանակ աստիճանաբար տարածւում է հայոց ցեղասպանութեան ճանաչումը Թուրքիայի ժողովուրդների մէջ, որը կարող է օգնել հայերի եւ այդ ժողովուրդների ապագայ համակեցութեանը: Շարժման նպատակը դուրսային փոխհատուցումը չէ, այլ ցեղասպանութիւնից վերապրած հայերի յետնորդների ազատ ու հաւասար ապրելու իրաւունքը: Եւ դրա համար հայերը պէտք չունեն օբանմաների «ճանաչում»-ին, առաւել եւս՝ միջամտութեանը: Իհարկէ, օբանմաները, բուշերը եւ նմանները որքան ուզում են թող խօսեն, կամ չխօսեն հայոց ցեղասպանութեան մասին, ընդունեն, ուրանան կամ

ժխտեն այն, միեւնոյնն է, հայոց ցեղասպանութիւնը պատմական փաստ է եւ ճշմարտութիւնը ընդմիշտ քօղարկած չի մնալու: Դրա մասին որեւէ կերպ խօսելը, թէկուզ ժխտելը, վերջին հաշուով հայերի օգտին է, որովհետեւ բացուում է հարցը եւ օգնում ճշմարտութեան բացայայտելուն: Վախը ցեղասպանութեան ժխտումից չէ: Փաստօրէն Թուրքիայի մեծ սխալը, այսինքն՝ ցեղասպանութեան ուրացումը մեծապէս օգնել է, որ հայկական հարցը վերարժարժուի եւ դուրս գայ մոռացութեան փոշուց: Վախը նախ՝ օբանմաների հաւանական ներքաշելն է հայկական հարցի լուծման գործընթացների մէջ եւ երկրորդ՝ հայերի սասարդների՝ պատրանքների մէջ ընկնելը, թէ մի օր օբանմաները կը լուծեն հայկական հարցը: Յայ նոր սերունդը պիտի ապրի ոչ թէ երեւակայական, այլ՝ իրական աշխարհում: Ներկայ իրականութիւնն այն է, որ Արեւմտեան Յայաստանում եւ Թուրքիայում գտնուող յարակից շրջաններում տասնեակ միլիոնաւոր բնակչութեան մէջ մեծամասնութիւն են կազմում ոչ-թուրք ժողովուրդները՝ քրդեր, լազեր, մուսուլման վրացիներ եւ այլ զանազան էթնիկ խմբեր, որոնք ձգտում են իրենց ազգային ինքնութեան վերականգնմանը: Այդ ժողովուրդների ազգային շարժումը վաղ թէ ուշ տանելու է դէպի ինքնորոշման իրաւունք, որը Թուրքիայի արեւելեան մասում կը ստեղծի նոր իրավիճակ եւ կը բացի ապագայի նոր հեռանկար: Այժմ այդ բազմացեղ միջավայրի ընդարձակ տարածքում ինքնութեան զարթօնք են ապրում նաեւ ծագումով հայերը: Թուրքիայում զարգացող տարբեր ազգերի պահանջատիրական այս շարժումը կարող է միասնական յաղթանակի յանգել, եթէ ընթանայ, առանց օբանմաների միջամտութեան եւ եթէ նացիոնալիստական գրգռումներով մէկ ազ-

գին չլարեն միւսի դէմ: Դինքի մտածումներն ու տեսակետները հիմնւած են հայկական եւ թուրքական վերոյիշեալ իրականութիւնների վրայ: Նա ընդհանրապէս համամիտ չէ Սփիւռքում տարուող «ճանաչման» աշխատանքների հետ: Իր խօսքերով «ճանաչման հարցը, վերջը հատուցումի հարցը, հողի հարցը եւ այլն եւ այլն... ես այդպիսի մտածումներ չունիմ: Իմ տեսակետս Յայաստանի եւ հայաշխարհի ապագայի մասին քայլ առ քայլ իրականութիւնն ապրիլն է, տեսնենք յետոյ Աստուած ինչ քայլ կը բացէ առաջելու, կամ ինձմէ վերջը իմ սերունդիս կընէ, ինչ որ պէտք է այդ քայլն ընէ առաջիկային:» Եւ ներկայ փուլում իր առաջնահերթ անելիքն է համարում Թուրքիայի ծագումով հայերին իրենց ինքնութեանը վերադարձնելը. «Ինձի համար շատ կարեւոր է այս հարցում աշխատել եւ գտնել այդ կորուսածները, ողջեցնել այդ մեռածները: Շատ կարեւոր է գտնել այդպիսի հայ մը եւ իրեն տալ իր հայութիւնը»: Եւ «ես թաքուն հայութեան ապագային մասին հոն ապրող քաղաքացի մը ըլլալով իմ առջեւ ունիմ մէկ պայքար, մէկ աշխատանք... պայքարել մեր հաւասար քաղաքացիութեան իրաւունքը ձեռք ձգելու եւ մեր ինքնութիւնը ազատաբար արտայայտելու իրաւունքը ձեռք ձգելու: Մեր հիմնկլայ հեռանկարը միմիայն ասիկա է»: Ազգային զարթօնքի այս շարժումը արդէն տւել է արդիւնքները, որ նախկինում երեւակայելն իսկ դժուար էր: Այսօր Սասունում, Դերսիմում եւ այլուր ծագումով հայերն իրենց յայտարարում են հայ եւ աշխատում են տէր կանգնել իրենց ազգային ժառանգութեան: Այդ զարթօնքի շարժումը յաջողութեամբ շարունակում է իր ընթացքը դէպի Մեծ Եղեռնի հարիւրամեակ: Օբանմաներն ու հայ օբանայականները այդ շարժման մէջ տեղ չունեն:



26-ամեայ Բեհզադ Աբդիի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Քամին իրեն է որոնում», լաւ ընդունելութիւն է գտել գրական շրջանակներում: Ահաւասիկ, նմուշներ նրա ստեղծագործութիւններից:

Բեհզադ Աբդիի

ԳՈՒՈՐՇԻՆ ԱՊԱԿՈՒ ՎՐԱՅ

Սկզբում
գոլորշի էինք ապակու վրայ

մանուկն եկաւ
մատի ծայրով ինձ նկարեց
մենութեանս համար
քեզ յաւելեց

զնաց
եւ յաջորդ օրը
քարը ձեռքին վերադարձաւ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ

Մեր մայրերին ասա
այն հաւաքական լուսանկարը
բզկտեց
ու իւրաքանչիւրս մի կողմ ընկանք

Մեր մայրերին ասա
երկինքը նոր ապաստան է
քանու հետ քշւած փափագների համար

ԵՐԿՐԻ ՎԵՐՋԻՆ ԲԱՈՐ

Աղանից
երկրի առաջին բառն էր՝
երկնքի հետ

Գնդակը
երկրի վերջին բառն էր՝
իր հետ

ԱՆՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Մրջիւնները
քանու բերած
թիթեռի թեւն են
յուղարկաւորում

ՆԱԲԱՎԱՐԸ

...Թէւ նաւավարը գնալու ցանկութիւն չունի

Նաւակը
ալիքների շարունակութեամբ առաջ է շարժուում
թէւ նաւավարը գնալու ցանկութիւն չունի

Նաւակը
ալիքների շարունակութեամբ առաջ է շարժուում
թէւ նաւավարը գնալու ցանկութիւն չունի

Նաւակը
ալիքների շարունակութեամբ առաջ է շարժուում
թէւ նաւավարը գնալու ցանկութիւն չունի

ՔԱՄԻՆ ԻՐԵՆ Է ՈՐՈՆՈՒՄ

Փայտփորիկ
ի՞նչ ես ուզում այս ծառից

-Կտուցս

ծա՛ռ
ծեռք քաշիր հողագնդից

-արմատս չի վերադարձնում

հողագո՛ւնդ
ի՞նչ ես որոնում
աչքդ յառած երկնքին

-ծգողականութիւնս եմ կորցրել

Երկինք
ոտքով մի սեղմիր հողագնդի կուրծքն այդպէս
հէ՛յ երկինք
քեզ հետ եմ երկինք

քամին ինքն իր հետ է խօսում
քամին իրեն է որոնում
քամին շտապ վազում է
ու երբեք չի հասնում

ՈՐՔԱՆ ԿԸ ԽՆՂԱՆՔ
Երկար տարիներ յետոյ
որքան կը խնդանք

ես յիշելով քեզ
դու՝ ինձ

ՔԱՐԱԲԵԿՈՐ
Տունը
ջարդած պատուհան է
դու՝
մանկութիւնից նետած քարաբեկոր

ԱՇՈՒՆ
Ձմեռը թախծոտ եղանակ է
ամառն ակելի թախծոտ

ինքն էլ չգիտի ի՞նչ է ուզում
ծնռանը ամռանն է սպասում
ամռանը՝ ծնռան

այսօր
գարնան հետ մի անկիւնում կանգնած
Լէյլայի գնալն է դիտում

Թարգմանեց՝ Նորվանը

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԻ ԳԵՐԲԸ



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՏԸՆՏԻՐ

Պարունակում է գործեր հետեւեալ
հաւաքածուներից
Անապատի ծաղիկները (1981)
Չընդհատող եղանակ (1995)
Մամուլում լոյս տեսած գործեր
Անտիպ բանաստեղծութիւններ

Ո՛Վ Է ՉԱՐԵՆՅԸ



Նոր հայեացք
Եղիշէ Չարենցի կեանքին եւ
ստեղծագործութիւններին.
Բանաստեղծի հոգեբանութեան վերլուծութիւն
հիմնւած նրա գործերի վրայ

ԱՌԻԾ ԱՐՔԱՆ

Կուլիա Տէր Յովհաննիսեան

Անտառում հրացանը ձեռքիս՝
հանդիպեցի առիւծին:

- Ողջո՛յն անտառի Արքային,-
գլուխս խոնարհելով ասացի ես:

- Ողջո՛յն,- ասաց առիւծը,-
բայց ի՞նչ է նշանակում «արքայ»:

- Դէ, արքայ, էլի: Ինչո՞ւ ես հա-
մեստութիւն անում, ինքը էլ գի-
տես, որ անտառի գազանների
արքան ես:

- Ո՛չ, չգիտեմ, սկի չգիտեմ ինչ
ասել է՝ արքայ:

- Կատակո՞ւմ ես, անյիշելի ժա-
մանակներից մարդիկ քեզ համա-
րում են գազանների արքան:

- Չէ, կատակելու հաւես չու-
նեմ, մարդիկ համարո՞ւմ են...
մարդիկ շատ բաներ են ասում,
իսկ ես լրիւ անտեղեակ եմ այդ
մասին ու նոյնիսկ չգիտեմ ի՞նչ է
«արքայ» կոչւածը:

- Դէ, արքայ, էլի, - կրկնեցի,-
այսինքն ամենահզօրը, բարձրա-
գոյնը, բոլորի գլխաւորը, բոլորին
կառավարողը: Անտառի բոլոր
բնակիչները,- շարունակեցի ոգե-
ւորւած,- սկսած ծստան մկներից
ու վերջացած հսկայամարմին
փղերով, ենթարկւում են քեզ, խո-
նարհուում քո առաջ, սարսափում
քեզանից, համարւում են քո հպա-
տակները...

-Սարսափելը գիտեմ, ձեռքս
ընկնեմ՝ տեղնուտեղը կը պատա-
ռոտեմ, կուտեմ, դրա համար էլ
սարսափում եմ, բայց, ասում եմ
քեզ, նրանք ինքնակամ չեն հպա-
տակւում կամ խոնարհուում իմ առ-
ջեւ, այդ ես եմ նրանց խոնարհում
իմ ուժով ու ճարակութեամբ: Օրի-
նակ, ժանիքներս խրելով հսկայ
ցուլի պարանոցի մէջ, նրան գե-
տին եմ տապալում եւ պատառո-
տում: Զրացանը չլինէր, քեզ էլ կը
խոնարհէի ու ախորժակով հուճ-
հում կուտէի... Իմ գործն ուտելն է:
Իսկ կառավարելը ո՞րն է...

- Կառավարե՞լ... կառավարել,
դէ, կասեցնել մարդկանց... կը նե-
րես՝ գազանների սանձարծակու-
թիւնը օրէնքի ուժով, որը գործա-
դրում են օրէնքի մարդիկ... կը նե-
րես՝ գազանները, թոյլ չտալ, որ
ամէն մարդ... կը ներես՝ գազան,
ինչ ուզի ասի կամ անի, ում ուզի՝
ուտի...

- Ո՛չ, դա մեզ պէտք չէ, ոչ ոք
անտառում տեղեակ չէ, որ իր գլ-
խին արքայ ունի, որին պիտի են-
թարկւի ապուշի պէս: Բոլորը
զբաղւած են մէկը միւսին ուտե-
լով... Իսկ քո ասած «օրէնքի ուժը»
այդ արքայ կոչեցեալի՞ն էլ է վե-
րաբերում. նա՞ էլ է ենթարկւում
օրէնքին... ես ինչ ուզեմ կասեմ,
կանեմ, ում ուզեմ կուտեմ՝ ինչպէս
միւս բոլոր գազանները:

- Այո,- ասացի սարսափով ու
ուսից վար իջեցրի հրացանս,
որովհետեւ առիւծը ինձ նայեց վե-
րից վար անթաքոյց ախորժակով:
Նոյնիսկ զոջացի նրան արքայ կո-
չելուս համար. այս ինձ թւում էր,
որ այդ տիտղոսը կը հրահրի իր
փառասիրութիւնը. ո՞վ չի սիրում
բարձրագոյնը լինել...

Առիւծը նայեց հրացանիս, եւ
ինձ թւաց, որ քնծծաղեց:

- Գիտե՞ս, թքած ունեմ քո այդ
օրէնքի վրայ: Իմ օրէնքը, իմ ճկուն
եւ հզօր մարմինն է, իմ սլացքը, իմ
դաժանութիւնը...

- Բայց, հասկացիր, է՛, առանց
օրէնքի թոյլերն ու անպաշտպան-
ները կը տուժեն: Քեզ չի վայելում
որպէս արքայ թքած ունեմաս
օրէնքի վրայ, քանզի արքան
պէտք է լինի արդարադատ, խղ-
ճով, հովանաւորի թոյլերին:

- Անտառում թոյլեր եւ ան-
պաշտպաններ չկան, մէկը զին-
ւած է սուր հոտառութեամբ, միւսը՝
փշերով, մէկը՝ պատեանով, միւսը՝
հզօր թելերով, մէկը արագավազ



է, միւսը՝ խորամանկ, իսկ եթէ մէկը
զուրկ է որեւէ պաշտպանական
միջոցից, ուղղակի բազմանում է
այնքան, որ ինչքան էլ ուտես, չի
վերջանայ... Գիտե՞ս, դուք էլ շատ
էք բազմացել...

- Ասածներդ արքային վայել
տրամաբանութիւն չէ:

- Էլի՞ «արքայ, արքայ», ասա՛
խնդրում եմ, երբ մարդն այդ անու-
նը կպցրեց ինձ, ինչ է, որոշեց նա-
եւ, որ ես կը պաշտպանե՞մ սրան-
նրան ու ինքս սոված կը մնա՞մ:

- Դո՞ւ՛ սոված...

- Կարծում ես հե՞շտ է հսկայ
կոտորներով ցուլին հետապնդել
ու գետին տապալել... Իսկ երբեւէ
մտածե՞լ ես, որ երբ մեծ չարչա-
րանքներով պատառոտում եմ
ցուլին, կշտանալուց յետոյ լեշը
թողնում եմ բորենիներին, անգղ-
ներին եւ այլ ձրիակերներին...
Չեր արքաներն էլ այդպէս կը վար-
ւէի՞ն...

- Չգիտեմ... երեւի... եթէ իհար-
կէ կշտանան...

- Սի՛րոպէ,- ընդհատեց
խօսքս,- դու արքա՞յ ես, թե՞ հպա-
տակ,- յանկարծ հարցրեց նա:

- Ոչ մէկը, ոչ միւսը, նորմալ քա-
ղաքացի եմ,- ասացի ես:

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԻՐԱՆԻ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ


- Դուք բոլորդ նման էք իրար եւ... բանի նման չէք, ոչ կարգին ժամիքներ ունէք, ոչ կարգին հոտառութիւն, ոչ սուր աչք, ոչ կնճիթ, ոչ էլ արագավազ ոտքեր, ուղղակի խղճալի էք... Իսկ ձեր արքայ կոչեցեալները ինչո՞վ են տարբերում միւսներից:

- Արքաները գինւած են օրէնքի ուժով:

- Էլի օրէ՛նք, օրէ՛նք, ասում են քեզ, դուք գինւած էք իրացանով, որ բոց է ժայթքում, կոտորում անխնայ, սարսափ տարածում... այդ է ձեր օրէնքը եւ շատ չի տարբերում անտառի օրէնքից,- ասաց առիծը եւ այնպէս մռնչաց, որ ես, իրացանը ձեռքիս, խելակորոյս փախայ ու թաքնուեցի թփուտների մէջ: Անկեղծ ասած, շատ ասելիք ունէի անտառի արքային, ուզում էի համոզել նրան, որ ընդունի արքայի պատւաբեր տիտղոսը: Բայց երեւում է՝ արքաների համբերութիւնն էլ սահմանափակ է, նրանք շատ չեն սիրում լսել, կշռադատել, խորանալ երեւոյթների մէջ կամ մանրամասնօրէն վերլուծել խնդիրները, մռնչում են ու վերջ... Առիւծն էլ բացառութիւն չէր: Ինձ մնում էր մխիթարել լոկ այն բանով, որ գոնէ նա տեղեկացաւ իր արքայ լինելու մասին, թէեւ համոզւած չէմ, որ այդ մասին տեղեկացւելուց յետոյ նա չի չարաշահի իր արքայական իրաւասութիւնները: Չի բացառում նաեւ, որ իր քիթը ամէն բանի մէջ խոթելու մարդուն բնորոշ բնոյթով փչացրի ամէն բան...

Նայեցի վեր՝ ծառերի վրայ հանգրւանած կապիկները, տեսնելով իմ փախուստը, բացել էին ատամները, քրքջում ու բաւականութեամբ քորում էին ուռած փորերը...

Շաբաթ Օգոստոսի 11-ի երեկոյեան ժամը 5-ին, 6.3 ռիխտեր ուժգնութեամբ երկրաշարժ տեղի ունեցաւ Իրանի հիւսիս-արեւելեան շրջաններում, որի հետեւանքով զոհւեցին հարիւրաւոր մարդ եւ վիրաւորւեցին հարիւրաւոր ուրիշներ: Երկրաշարժի կենտրոնը Ահաբ քաղաքն էր, սակայն գետինը ցնցւեց նաեւ Թաբրիզ եւ Ուրմիա քաղաքներում եւ դրանց շրջակայ-



քում: Աւերած շրջանները հիմնականում գիւղեր եւ աւաններ են, ուր շինարարութիւնը ընդհանրապէս չի կատարում ժամանակակից հակաերկրաշարժային ստանդարտների համաձայն:

ԼԱՐԵՆԿՈՎԻ ՀՐԱՇՔԸ ՀԻՏԼԵՐԸ ՄԵՐՈՐԵԱՅ ՊԱՐԻՉՈՒՄ




(c)Сергей Ларенков



(c)Sergey Larenkov



ER.ru/time/
Сергей Ларенков



sergey-larenkov.livejournal.com

Ռուս լուսանկարիչ Սերգեյ
Լարենկոն երկրորդ աշ-
խարհամարտի (1939-1945)
ընթացքում Գերմանիայում,
Ֆրանսիայում, Ալստրիա-
յում եւ Եւրոպայի այլ երկր-
ներում նկարած լուսա-
նակրները միատեղել է նույն
վայրերում ներկայիս ար-
ած լուսանկարներին եւ
ստեղծել ժամանակների
համատեղման ուժեղ պատ-
կերներ:



ԴԵՂՁԻ ՊԱՂՊԱՂԱԿ

Բաղադրություն

Դեղձ	3 հատ
Սերուցք	200 գրամ
Կաթ	1 թեյի բաժակ
Շաքարաւազ	4 ճաշի գդալ
Ձի դեղնուց	1 հատ
Վանիլա	1 թեյի գդալ



Պատրաստման եղանակ

Նախ կաթը եռացնել ու թողնել, որ պաղի: Ապա կաթին ավելացնել ձի դեղնուցը, շաքարաւազը (ըստ ճաշակի կարելի է շաքարաւազի չափը ավելացնել կամ պակսեցնել) ու վանիլան եւ լաւ խառնել: Դեղծերը կեղեւել, կորիզները հանել ու կտրատել եւ լցնել կաթի խառնուրդի մէջ. վերջում ավելացնել սերուցքը եւ էլեկտրական հարիչով 2-3 րոպէ լաւ խառնել, մինչեւ որ համասեռ զանգւած ստացւի: Պատրաստածը լցնել մի մետաղեայ ամանի մէջ ու դնել սառցարանը (ֆրիզըր): 15-20 րոպէն մէկ այն կամաց խառնել որպէսզի չսառցակալի: Եւ այսպէս՝ 3-4 ժամից մեր համեղ դեղծի պաղպաղակը պատրաստ է լինելու: Աւելացնենք, որ պաղպաղակը չի կարելի երկար պահել սառցարանում եւ պէտք պատրաստելուց անմիջապէս յետոյ ուտել, եթէ ոչ այն կը սառչի:

ՔԱՐԻ ԱԽՈՐԺԱԿ

ՏՆՏԵՍՈՒՀՈՒ ԱՆԿԻՆ ԻՆՉՊԷՍ ՈՏՔԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՏՅԱՃ ՀՈՏԻՉ ՈՒ ՃԱՔԵՐԻՉ

Քաթրին Եաղուբի

Ամռան շոգ եղանակին, կարելի է անգամ կանանց ոտքերն էլ կօշիկների մէջ երկար մնալուց, սիւստ հոտ ստանան:

Այս համարում եւս մի քանի խորհուրդներ ունենք առողջ ու գեղեցիկ մնալու համար:

1 -Մէկ գրամ լիմոնի աղը (պրսկ.՝ ջոհար լիմու) հալեցրէք 100 գրամ տաք ջրի մէջ եւ ոտքերը դրանով լացեք, ապա լաւ չորացրէք:

2 -Երեսը բաց կամ ծակոտիներով կօշիկներ հագնէք, ամէն օր գուլպաները փոխէք եւ կօշիկների մէջ կլորաֆիլ կտորներից օգտւէք:

3 -Ոտքերը լացեք եւ յետոյ ալկոհոլով մերսէք:

4 - Ոտքի յատուկ քսուկներ օգտագործէք, իհարկէ եթէ դրանց որեւէ ալերգիա չունէք:

5 -Կարելի է օգտագործել հիմա եւ դեղնափայտ (պրսկ.՝ սեդր):

6 -Կարելի է ոտքերը լացել քացախով եւ աղաջրով, ապա լաւ չորացնել:

7 -Ոտնաթաթի կամ կրունկների ճաքի բուժման համար պէտք է նախ մի ոչ շատ կոպիտ ոտնաքարով եւ տաք ջրով ոտքերը մի քանի րոպէ տրորել, յետոյ մի մեծ սափորի կամ դոյլի մէջ գոլ ջուր լցնել եւ ավելացնել ձիթախիւղ: Ոտքերը այդ խառնուրդով լացելուց յետոյ լաւ չորացրէք, եւ թթու կիտրոնի հիւթի ու գլխիթիմի հիւթի խառնուրդով ճաքած ու կոշտուկ դարձած տեղերը շփէք: Սա թողէք ամբողջ գիշերայ ընթացքում ձեր ոտքերին մնայ, իսկ սաւանները չիւղոտւելու համար լաւ կը լինի յատուկ այդ նպատակով պատրաստած, չմերժող պլաստմասայից գուլպաներ հագնէք: Դա ինքնին կօզմի նաեւ, որ ձեր ոտքերը ավելի շատ փափկեն:

8 -Գուլպան, պատճառ է դառնում, որ ոտքերը, կօշիկների մէջ շունչ քաշեն: Հնարաւորին չափ պէտք է միշտ գուլպայ հագնել:



ՄԵՂԱՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ

Արման Տ.Ստեփանյան



Ընդհանրապես մեդալները որոշակի մետաղներից պատրաստած կլոր կամ ձևաձև նշաններ են, որոնց վրայ քանդակած է լինում ինչ-որ պատկեր, գերբ կամ իրադարձութեան խորհրդանիշ: Մեդալ բառը առաջին անգամ օգտագործել է 1587 թվականին Անգլիայում, որն իսկ վերցած է եղել միջնադարեան ֆրանսերեն medaille բառից, որը հին լատիներենից է վերցած: Սկզբնական շրջաններից մեդալը համարել է որեւէ պարգևատրման նշան: Առաջին անգամ այն օգտագործել է Ալեքսանդր Մակեդոնացու կողմից: Երբ նրան յաջողեց յաղթել իր պատերազմներից մեկում, նա իր շնորհակալությունը եւ երախտագիտությունը յայտնելու նպատակով, Ջանաթան անունով մի հոգեւորականի, որը նրան օգնել էր պատերազմի դաշտում, ուղարկեց մի մեդալ: Դրանից յետոյ այն տարածեց ինչպէս նաեւ հին

